ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*Արցախի Հանրապետության զբոսաշրջության
եւ պատմական միջավայրի պահպանության վարչություն*

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
(նախախորհրդային շրջան)

Ներածություն. *Խաչենի իշխանությունը միջնադարյան Հայաստանի վարչա-քաղաքական խոշոր կազմավորումներից էր, հայոց պատմության եւ մշակույթի մեջ կարեւորագույն դերակատարում ունեցած շրջաններից մեկը: Որոշակի փոփոխություններով Թ.-ԺԶ. դարերը գոյատեւած Խաչենի իշխանության տարածքը զբաղեցնում էր «Աշխարհացույց»-յան Արցախի հիմնականում լեռնային շրջանները եւ նախալեռնային շրջանների որոշ հատվածներ: Հարկ է նշել, որ Արցախի գավառների տեղադրության եւ դրանց սահմանների վերաբերյալ ուսումնասիրողները միակարծիք չեն: Այդուհանդերձ, հանրագումարի բերելով խնդրի շուրջ եղած տեսակետները՝ պարզ է դառնում, որ իր գոյության ընթացքում Խաչենի իշխանությունը հիմնականում զբաղեցրել է Արցախի կենտրոնական գավառները՝ հյուսիսում սահման ունենալով Մռավի հարավային լանջերը, հարավում՝ Վարարակն-Կարկառ գետագիծը, արեւելքում՝ Կարկառ գետի աջափնյակը, իսկ արեւմուտքում՝ Սեւանի ավազանի արեւելյան շրջանները (նկ. 1): ԼՂՀ ներկայիս վարչատարածքային բաժանումով այն ընդգրկում էր Մարտակերտի, Շահումյանի, Քարվաճառի, Շուշիի շրջանները, Քաշաթաղի, Մարտունու եւ Ասկերանի շրջանների մի մասը եւ ՀՀ Գեղարքունիքի մարզի արեւելյան հատվածները*[1]:

Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների եւ հնավայրերի ուսումնասիրության պատմությունը պայմանականորեն կարելի է

---

[1] **Վ. Բալայան,** Արցախի պատմությունը հնադարից մինչեւ մեր օրերը, Երեւան, 2002, էջ 106:

բաժանել երեք փուլերի՝ ա) նախախորհրդային շրջան, բ) խորհրդային շրջան, գ) հետխորհրդային կամ անկախության շրջան:

Մեր կողմից դասակարգված շրջափուլերը իրարից տարբերվում են ոչ միայն տվյալ ժամանակաշրջանում գործող հասարակարգով, այլեւ հիշյալ ժամանակահատվածներին բնորոշ մասնագետների պատրաստվածությամբ, կատարված հետազոտությունների՝ գիտության պահանջներին համապատասխանությամբ եւ նյութի մեկնաբանման անաչառությամբ: Հատկապես վերջինս առավել ակնառու էր խորհրդային ժամանակաշրջանում, երբ Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրությունը դարձավ Բաքվի գիտնականների «մենաշնորհը»:

Նախախորհրդային շրջան. *Հետաքրքրությունը Արցախի հնություններ նկատմամբ եւ դրանց մասնակի ուսումնասիրությունը սկիզբ է առնում ԺԸ. դարում: Դրանք հիմնականում հոգեւոր դասի ներկայացուցիչների ձեռնարկած գործողություններ էին, որոնք առավելապես սահմանափակվում էին Հայաստանի տարբեր շրջաններ կատարած ուղեւորություններով, հուշարձաններ այցելելով եւ դրանց ընթացքում հանդիպած պատմաճարտարապետական հուշարձանների նկարագրությամբ ու վիմագիր տեքստերի ընդօրինակություններով: Տեղագիր-հետազոտողների հետաքրքրությունների առանցքը հայրենի բնության ու աշխարհագրության, վանքերի ու եկեղեցիների, բերդերի ու քարավանատների նկարագրությունն էր, ինչպես նաեւ հուշարձանների որմերին եւ շրջակայքում առկա վիմագիր հիշատակարանների հավաքումը*[2]*: Եվ շատ դեպքերում վիմագրերով աղքատ հուշարձանները դուրս էին մնում ճանապարհորդ-բանահավաքների ուշադրությունից, ինչի մասին փաստում է ԺԹ. դարի հետազոտող Մ. Սմբատյանցը. «...չունէր ամենեւին գրուածք. ուստի տեսինք եւ անցանք»*[3]*:*

Այսօրինակ հետազոտողները, որոնք իրավամբ ստացել են բանահավաք-հնասերներ անվանումը, իրենց կատարած աշխատանքով հեռու էին գիտական հետազոտությունների անցկացման սկզբունքներից: Այդուհանդերձ, դրանք անդրանիկ քայլերն էին պատմական հուշարձանների ուսումնասիրության ուղղությամբ, եւ մեզ հասած աշխատություններից շատերը մինչ օրս չեն կորցրել իրենց աղբյուրագիտական արժեքը:

---

[2] «Դիվան հայ վիմագրության», պր. 1, կազմեց Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ 19:

[3] **Մ. արք. Սմբատեանց Նախիջեւանցի,** Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 230:

Այդ շրջանի ուսումնասիրողների մեծ մասի նկարագրությունները ներկայացված են ականատեսի աչքերով, եւ մեր օրերում դրանց կարեւորությունը չափազանց մեծ է, քանզի ուսումնասիրության առարկա դարձած որոշ հուշարձաններ կամ չեն պահպանվել, կամ մեզ են հասել կիսավեր վիճակում:

Խաչենի իշխանության գբաղեցրած տարածքի վանքերի ու խաչքարերի արձանագրությունները հավաքելու գործին առաջին անգամ ձեռնամուխ է եղել Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը 1718 թ.: Նրա աշխատության ընօրինակը մնում է անհայտ: Սակայն Եսայի կաթողիկոսի ձեռագրից օգտվելու մասին հիշատակում են Ս. Ջալալյանցը, Հ. Շահխաթունյանցը, Հ. Ղրիմեցին եւ ուրիշներ:

Մեզ են հասել նրա աշխատության երեք ընդօրինակությունները, որոնք պահվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում: Դրանցից առաջինի հեղինակն է Էջմիածնի գրագիր Հովհաննես եպիսկոպոս Ղրիմեցին: 1821-1822 թթ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Եփրեմ Ջորագեղցին վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու եւ այլ հոգեւորականների ուղեկցությամբ այցելում է Հայաստանի հյուսիսարեւելյան նահանգներ: 1822 թ. ամռանը խումբը ժամանում է նաեւ Գանձասար, որոնց թվում էր նաեւ վեհարանի գրագիր Հովհ. եպս. Ղրիմեցին: Նա, ամենայն բարեխղճությամբ, արտագրում է Եսայի կաթողիկոսի տետրակը՝ այդ մասին հիշատակելով իր ընդօրինակած աշխատության հիշատակարանում. «Յամի Տեառն 1822, յամսեանն յուլիսի մէկին, ընդ սրբազնակատար Եփրեմ կաթողիկոսին մինչ էաք ի Գանձասար հրաշալի վանս, տեսի զբազում վանորէից, եկեղեցեաց եւ խաչից հնագոյն արձանաց օրինակս ժողովեալս ի միում հին տետր ձեռամբ Եսայի կաթողիկոսին Աղուանից ի թուականութեան հայոց ՌՃԿԷ (1718), զոր եւ օրինակեցի կրկին իմով ձեռամբ»[4]*:*

Հաջորդ ընդօրինակությունը նույնպես կատարվել է Գանձասարի վանքում՝ 1830-1854 թթ. Արցախի մետրոպոլիտ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի կողմից, ինչի մասին խոսվում է նրա աշխատության հիշատակարանում. «Ի ՌՄԾԸ (1809) թուին հայոց ի Սուրբ Աթոռս Գանձասարու վերստին նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ

---

[4] **Ե. Հասան-Ջալալեան,** Վիմական արձանագրութիւնք, գրիչ՝ Յովհ. եպս., Գանձասար, 1822, ՄՄ թ. 9923, էջ 2ա: Հայագետ Պ. Հակոբյանը այս ընդօրինակության հեղինակ է համարում Հովհաննես եպս. Մշեցուն: Ընդօրինակումը կատարվել է 1822 թ. հուլիսի 1-ին (տես **Պ. Հակոբյան**, Հայկական վիմագրերը եւ Խաչատուր Աբովյանը, ՊԲՀ, 1971, թ. 2, էջ 45):

ձեռամբ Պաղտասար վարդապետի Ջալալեան, եւ որդւոյ Դանիէլ հազարապետին Տեառն Խաչենոյ»[5]: Վիմագրագետ Ա. Հարությունյանի կարծիքով «վերստին նորոգեցավ արձաններս ի հին օրինակէ» արտահայտությունը պետք է հասկանալ արտագրվեց, ընդօրինակվեց իմաստով[6]:

Եսայի կաթողիկոսի տետրակի արտագրությունը ներկայացնող երրորդ ձեռագիրը կազմվել է 1828 թ. Հովհաննես Շահխաթունյանցի կողմից Աստապատի Ս. Ստեփանոս վանքում[7]: Հավելենք, որ նշված ձեռագրից զատ, Շահխաթունյանցի կատարած ընդօրինակությունները տեղ են գտել նաեւ ավելի ուշ նրա հրատարակած «Ստորագրութիւն կաթողիկե Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ» աշխատության երկրորդ հատորում. «Արձանագրութիւնք աշխարհին Աղուանից՝ զորս ժողովեաց եւ ի խաչարձանաց Եսայի կաթուղիկոս նոցին Աղուանից ի թուականութեանն Հայոց ՌՃԿԷ (1718) ի մի տետր. Յորոյ գրուածոց առեալ մեր դիցուք աստէն ի տեղեկութիւն հայրենի հնութեանց»[8]:

Եսայի կաթողիկոսի ներկայացրած վիմագրերի արտագրություններն արվել են Խաչենի իշխանության հոգեւոր կենտրոններ Գանձասարից, Խաթրավանքից, Դադիվանքից, Եղիշեի եւ Հավապտուկ վանքերից եւ այլ հուշարձաններից: Իր ընդօրինակած արձանագրությունների հիման վրա հեղինակը փորձել է ներկայացնել նաեւ Ծարի իշխանության տոհմաբանությունը: Մեզ հասած ընդօրինակությունների համեմատությունը առկա բնագրերի հետ ցույց է տալիս, թե եկեղեցական նշանավոր գործիչը որքան ճիշտ է արտագրել արձանագրությունները, որոնք գրեթե անփոփոխ ձեւով հետագայում տեղ են գտել Հ. Շահխաթունյանցի, Ս. Ջալալյանցի, Մ. Բարխուդարյանցի եւ այլոց աշխատություններում:

Խաչենի վիմագրերի հաջորդ ընդօրինակումը կատարել է Եփրեմ կաթողիկոսի ղեկավարած չքախմբի մյուս մասնակիցը՝ Մեսրոպ Թաղիադյանցը, ում աշխատանքը, ցավոք, մեզ չի հասել: Իր ճամփորդությունների

---

[5] **Ե. Հասան-Ջալալեան,** Վիմական արձանագրութիւնք, ՄՄ թ. 7821, էջ 18ա:

[6] **Ա. Հարությունյան,** Եսայի Հասան-Ջալալյանի վիմագրագիտական վաստակը (ըստ ՄՄ թ. 7821 ձեռագրի), «Էջմիածին», 2015, Ժ., էջ 117-120: Տես նաեւ **Ս. Հասան-Ջալալյան,** Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական գործունեությունն ու պատմագրական ժառանգությունը, ԼՀԳ, 2011, թ. 3, էջ 96:

[7] «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, թ. 4537, էջ 1232:

[8] **Յովհ. եպս. Շահխաթունեանց,** Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրությամբ Ա. Տեր-Ստեփանյանի, հ. Բ., Էջմիածին, 2014, էջ 450. **Օ. Եգանյան,** Հովհաննես եպս. Շահխաթունյանցի «Ստորագրութիւն կաթողիկե Էջմիածնի» աշխատության մեջ հիշատակված ձեռագրերը, «Էջմիածին», 1972, Ը., էջ 64:

գրքում խոսելով արցախյան շրջագայության մասին՝ նա նշում է. «Աստանօր հրամանաւ Ներսիսի շրջեցայ ի մերձակայ վանորայս եւ օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին, գտեալս յորմունս եկեղեցեաց, ի խաչքարս, եւ ի վէմս ապառաժից. սկսեալ ի Գանձասարայ մինչեւ ի Հաղբատ եւ ի Սանահին, զորս եւ մատուցի նմա, առ իս պահելով զօրինակս նոցա՝ յորք յետոյ կորեան[9]»:

Գանձասարի ու շրջակա վանքերի վիմագիր եւ ձեռագիր նյութերից լայնորեն օգտվել է մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանցը: Եսայի կաթողիկոսի վիմագրերի արտագրությունից բացի, մետրոպոլիտը կազմել է նաեւ Հասան-Ջալալյանների իշխանական տոհմացանկը: Ձեռագրի գոյության մասին տեղեկանում ենք հայ մեծանուն վիպասան Րաֆֆու հաղորդումներից, ով Արցախ կատարած երկամսյա ուղեւորության նոթերում գրում է, որ Գանձասարի վանքում տեսել է մետրոպոլիտ Բաղդասարի անտիպ աշխատությունը. «Գանձասարի վանքի գյուղում, Վախթանգ-բեկ Հասան-Ջալալյանի տանը գտա մի հնամաշ տետրակ: Դա սկսած, բայց չավարտած մի պատմության սեւագրությունն է՝ գրված Բաղդասար մետրոպոլիտի ձեռքով, գլխավորապես Հասան-Ջալալյանների տոհմի վերաբերությամբ»[10]: Ձեռագիր մատյանի մասին գրողը հիշատակում է նաեւ «Խամսայի մելիքությունները» աշխատության համար աղբյուր հանդիսացող անտիպ աշխատությունները թվարկելիս[11]: Հիշյալ ձեռագրի բովանդակությունից մի հատված Րաֆֆին ներկայացնում է մեկ այլ աշխատության մեջ. «Ազգաբանութիւն եւ ծննդաբանութիւն ազգին Հասան-Ջալալեանց հանեալ եւ հաւաքեալ ի պատմութեանցն Հայոց եւ Աղվանից, եւ ի յարձանագրեաց ի խաչքարաց եւ ի տապանաքարաց, եղելոց ի վանս Գանձասարայ եւ ի շրջակայ նորին վանորայս եւ տեղիս հանդերձ թուաբանութեամբ, զորս համառօտ շարահիւսեցի ես Բաղդասար միտրապոլիտ Աղուանից Հայոց որդի Դանիել-բեկ իշխանի եւ թոռն Մելիք-բեկ իշխանին Հասան-Ջալալեանց նախկին տերանցն երկրին Արցախոյ գաւառին Խաչենոյ, յաղագս տեղեկութեան ներկայ եւ ապագայ սերնդոց, տոհմայնոց եւ ազգականոց իմոց: Գրեցաւ ի ՌՄՂԸ թուին Հայոց եւ ի 1849 ամի Տեառն»[12]:

---

[9] «Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ Էջմիածնի ի Հայս», հ. Ա., Կալկաթա, 1847, էջ 332:

[10] **Րաֆֆի,** Խամսայի մելիքությունները, ԵԺ, հ. Թ., Երեւան, 1987, էջ 606:

[11] Անդ, էջ 612:

[12] **Րաֆֆի,** Գաղտնիք Ղարաբաղի, ԵԺ, հ. Ժ., Երեւան, 1959, էջ 495:

Խաչենի վիմագրական հարուստ ժառանգությունը, եւ առհասարակ, նյութական մշակույթի հուշարձանները եղել են նաեւ Սարգիս Ջալալյանցի բազմակողմանի ուսումնասիրության առարկան: Հասան-Ջալալյան իշխանական տան շառավիղը Արեւելյան Հայաստանում կատարած իր շրջագայության ընթացքում եղել է պատմական Արցախի գրեթե բոլոր բնակավայրերում, նկարագրել գյուղերն ու ավանները, հավաքել իր ժամանակ դեռեւս պահպանված արձանագրությունների մեծագույն մասը, ինչպես նաեւ վանքերում ու մասնավոր անձանց մոտ գտնվող ձեռագրերի հիշատակարաններն ու բազմաթիվ փաստաթղթեր[13]*: Ջալալյանցի արտագրությունները կատարված են բծախնդրորեն, ուղեգրական տպավորությունները ներկայացված փաստական նյութի իմացությամբ:*

Արցախի հնությունների նկարագրությամբ աչքի ընկնող հաջորդ ուսումնասիրողը Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանցն է՝ կեղծանունը Հայկունի: Հայրենիքի նկատմամբ տածած ջերմ սիրով եւ այն ավելի խորը ճանաչելու ձգտումով՝ Եղիշե Գեղամյանցը, եկեղեցական եւ հասարակական աշխատանքից զատ, շրջագայել է նաեւ հայրենիքի զանազան վայրերում եւ ժամանակի պարբերականների էջերում կամ առանձին գրքույկներով հրատարակել իր հավաքած նյութերը: Բանահավաքը իր «Ուղեգնացական ակնարկներ»[14] *աշխատությունը շարադրել է Արցախում շրջագայելու ժամանակ: Հակառակ համեստ վերնագրին՝ երկը հարուստ է Արցախի պատմությանը, վիմագրերին, ազգագրությանը, բանահյուսությանը, էթնիկ վիճակագրությանը, կրթության եւ տնտեսական կացությանը վերաբերող տվյալներով: Աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել 1885 թ. «Մեղու Հայաստանի» երկօրյա պարբերականում՝ իրարահաջորդ 43 հոդվածներով: Կենդանության օրոք հեղինակին այդպես էլ չի հաջողվում հոդվածաշարն ի մի բերել առանձին գրքով, որի պատճառով էլ երկը հանիրավի դուրս է մնացել Արցախի պատմության եւ հնությունների ուսումնասիրությամբ զբաղվող հետագա հետազոտողների ուշադրությունից: Մինչդեռ Գեղամյանցի հայրենագիտական երկը Ս. Ջալալյանցի ուսումնասիրությունից հետո մեզ հայտնի երկրորդ եւ մի շարք առումներով իր նախորդին լրացնող համապարփակ աշխատությունն է, որը հրապարակվել է Մ. Բարխուդարյանցի «Արցախ» աշխատությունից ուղիղ տասը տարի ավելի վաղ:*

---

[13] **Ս. Ջալալեանց,** Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա., Տփխիս, 1842, մասն Բ., Տփղիս, 1858:

[14] **Ե. (Հովակիմ) ավագ քին. Գեղամյանց,** Ուղեգնացական ակնարկներ, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք ԺԳ., Երեւան, 2010:

Իր ճամփորդությունների ընթացքում Հայկունին նկարագրել է այն ժամանակ դեռեւս գործող կամ խոնարհված բազմաթիվ եկեղեցիներ եւ վանքեր, խաչքարեր եւ տապանաքարեր, հավաքել ձեռագիր մատյաններ եւ ուսումնասիրել դրանք: Մեզ զբաղեցնող խնդրի տեսանկյունից արժեքավոր են Եղիշե առաքյալ, Գանձասարի վանք, Հավապտուկ վանք, Դադիվանք, Հակոբավանք, Վաղուհասի Տիրամայր (Մայրաքաղաք) վանքերի մասին թողած նրա հաղորդումներն ու վերծանված արձանագրությունները: Ժամանակի սղության պատճառով հեղինակը չի կարողացել ուսումնասիրել բոլոր վիմագրերը: Բայց աշխատության մեջ տեղ գտած վերծանություններն էլ արված են բարեխղճորեն եւ հանգամանալից՝ դրանք համադրելով նախորդ հետազոտողի՝ Ս. Ջալալյանցի «աչքից վրիպած»[15] վիմագրերի հետ:

Հայոց արեւելից կողմանց նյութական մշակույթի հուշարձանների, պատմության, ազգագրության եւ այլ հարցերի հանգամանալից ուսումնասիրությանն է անդրադարձել Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը: Կատարված հետազոտությունների առաջին արդյունքը եղավ գիտնականի հեղինակած «Աղուանից երկիր եւ դրացիք» աշխատությունը[16], որով առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվեցին անդրկուրյան հայաբնակ գավառներում դեռեւս պահպանված պատմամշակութային հուշարձանները: Նրա երկրորդ եւ առավել բարձրարժեք հրապարակումն էր «Արցախ» գիրքը: Խորապես գիտակցելով իր աշխատանքի արժեքն ու կարեւորությունը՝ աշխատության առաջաբանում հեղինակը նշում է. «Այնքան անհոգ եւ անտարբեր ենք, որ չգիտենք, թէ ինչ հնութիւններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիքներից մեզ աւանդ մնացած. չգիտենք, թէ պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի եւ դաշտերի մէջ. չգիտենք, թէ ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ անապատների, մատուռների եւ եկեղեցիների, խաչարձանների եւ տապանաքարերի վերայ եւ մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում: Մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարներն»[17]:

Ուսումնասիրությունն ընդգրկում է Արցախի եւ Ուտիքի ամբողջ տարածքի պատմաճարտարապետական հուշարձանները, վիմագրերը, եկեղե-

---

[15] Անդ, էջ 69:

[16] **Մ. Բարխուտարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք, Թիֆլիս, 1893:

[17] **Մ. Բարխուտարեանց,** Արցախ, Յառաջաբանութիւն, Բագու, 1895:

ցիներում ու մասնավոր անձանց մոտ պահպանված ձեռագրերի նկարագրություններն ու հիշատակարանները, դիտողություններ եւ դատողություններ այդ բոլորի մասին, որոնցից շատերն ընդունվել են մեր պատմագիտության կողմից եւ հիմք դարձել հիշյալ տարածքներում եղած պատմական դեպքերի ճշգրտման եւ աշխարհագրական տեղանունների տեղադրման համար: Մակար եպիսկոպոսի վիմագրական նյութերի հավաքածուն ամենահարուստն է իր նախորդների ընդօրինակությունների համեմատ: Լինելով Արցախից (ծնունդով Խնածախ գյուղից)՝ Բարխուդարյանցը լավ գիտեր երկրամասի պատմությունը, ինչը եւ նրան օգնում էր համեմատաբար հեշտ կարդալ կիսախաթար վիմագրերը: Նա հավաքել է վիմական արձանագրություններ, արտագրել ձեռագիր հիշատակարաններ, նկարագրել գրեթե բոլոր բերդերը, վանական համալիրները: Մակար եպիսկոպոսի հավաքած նյութերն անգնահատելի նշանակություն ունեն իրենց հավաստիությամբ, բազմազանությամբ եւ գրեթե սպառիչ ամբողջականությամբ: Չնայած դրան՝ աշխատության մեջ կան որոշակի թերություններ. հաճախ հեղինակը փաստերին տալիս է կամայական բացատրություններ, պատմական տարբեր շրջաններին վերաբերող նյութի պակասը լրացնում սեփական ենթադրությամբ եւ որ ամենատարածվածն է՝ հաճախ տեսանելի է մի կողմից ԺԹ. դարի Արցախի, իսկ մյուս կողմից՝ պատմական Խաչենի հետ կապված տարբեր փաստերի շփոթությունը: Այդուհանդերձ, Բարխուդարյանցի ծավալուն աշխատությունը առ այսօր կարեւոր աղբյուրագիտական հենք է Արցախի պատմությամբ եւ հնություններով զբաղվողների համար:

Հայրենի լեռնաշխարհի նյութական եւ հոգեւոր մշակույթի հնօրյա արժեքների բազմակողմանի ուսումնասիրություններով աչքի է ընկնում Խաչիկ վարդապետ Դադյանը, որը առանձնակի ուշադրություն է դարձրել նաեւ Արցախի պատմությանն ու հնագիտությանը: Բավական է նշել, որ գերմանացի Էմիլ Ռեսլերից հետո նա առաջին հայ հետազոտողն էր, ով հնագիտական ուսումնասիրություններ կատարեց Ղարաբաղի տարածքում՝ պեղելով Առաջաձոր, Քոլատակ, Մաղավուզ, Կիչան գյուղերի շրջակայքում տարածվող մի շարք կուրգաններ[18]*:*

Դրա հետ մեկտեղ հետազոտողը հավաքել եւ նկարագրել է Արցախի տարածքի հոգեւոր կենտրոններում գտնվող տասնյակ ձեռագրեր, հրապարակել դրանց հիշատակարանները, բազմաթիվ հրովարտակներ եւ

---

[18] **Յ. Թօփճեան,** Ցուցակ ժողովածուած Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ., Վաղարշապատ, 1900, էջ 63-74:

այլն: Միաժամանակ զբաղվելով նաեւ բանահավաքչական աշխատանքներով՝ Խ. Դադյանը արժեքավոր տեղեկություններ է հավաքել Արցախի բնակավայրերի, գավառների, բնակչության թվի, սրբավայրերի եւ առանձին եկեղեցիների մասին՝ նպատակ ունենալով գրել Ղարաբաղին նվիրված ժողովրդագիտական աշխատություն[19]*:*

Խ. Դադյանի գործունեության կարեւոր մասն է կազմում վիմագիր արձանագրությունների հավաքումը, որոնց մի մասը լույս է տեսել «Այրարատ» եւ «Բանասեր» ամսագրերում, իսկ մի մասն անտիպ է եւ գտնվում է Հայաստանի ազգային արխիվում[20]*: Վարդապետն առաջինն է հավաքել ու հրապարակել Մեծարանից Ս. Հակոբավանքի մոտ երեսուն արձանագրությունները*[21]*, Բերդաձորի Ս. Գրիգոր եկեղեցու (Կարմիր վանք)*[22] *եւ Առաջաձոր գյուղի տարածքի բազմաթիվ վիմագրերը*[23]*: Խաչիկ վարդապետի գրչին են պատկանում նաեւ առանձին պատմագիտական աշխատանքներ, որոնցից քննվող խնդրի համար առավել արժեքավոր է «Համառոտ տեղեկագիր Արցախի «Ղարաբաղի» թեմի վանքերի» ուսումնասիրությունը*[24]*: Վերջինս կարեւոր տեղեկություններ է պարունակում արցախյան մի շարք վանքերի վիճակի, առանձին կառույցների մանրամասների, դրանց պահպանվածության վիճակի մասին:*

Արցախի պատմության, աշխարհագրության եւ մշակույթի տարբեր հարցերի ուսումնասիրությանն է անդրադարձել նաեւ Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանը: Գիտնականը, բնավ չլինելով Հայաստանում, կուտակած հարուստ գիտելիքի շնորհիվ տվել է ներկայացվող տարածքների մանրակրկիտ նկարագրությունը, առանձին հուշարձաննե-

---

[19] **Խաչիկ ծ. վրդ. Դադեան,** ԵԺ, «Արարատ»-ի ժառանգությունը, հ. Ա., կազմեց՝ Ն. Պետրոսյանը, Էջմիածին, 2007, էջ 10:

[20] **Խ. Դադյան**, Խաչեն գավառի եկեղեցիների պատերից, խաչքարերից եւ տապանաքարերից քաղված արձանագրություններ, ՀԱԱ, ֆոնդ 319, ցուցակ 1, գործ 5: Նույնի՝ Ճանապարհորդական նշումներ Ղարաբաղի գյուղերում գտնված խաչքարերի, գերեզմանաքարերի եւ շինությունների պատերի վրա եղած արձանագրությունների մասին, նույն տեղում, գործ 9:

[21] **Խ. ծ. վրդ. Դադեան,** Մեծարանց որ եւ Ս. Յակոբայ վանից արձանագրութիւնները, «Բանասէր», 1901, թ. 3, պր. 2 եւ 3, էջ 135-147:

[22] **Ա. Ղազիյան,** Վավերագրեր Խաչիկ ծայրագույն վարդապետ Դադյանի հավաքածուից, ՊԲՀ, 2006, թ. 3, էջ 276. **Խաչիկ վարդապետ**, Արցախ, երկասիրեց Մակար եպս. Բարխուդարեանց, Բագու, 1895, «Արարատ», 1896, թ. 2, էջ 81:

[23] **Խաչիկ վարդապետ**, Առան երկիր կամ աշխարհ, «Արարատ», 1896, թ. 5, էջ 233-234:

[24] **Խաչիկ ծ. վրդ. Դադեան,** Համառոտ տեղեկագիր Արցախի (Ղարաբաղի) թեմի վանքերի, ԵԺ, «Արարատ»-ի ժառանգությունը, հ. Ա., էջ 29-38:

Նկ. 1. Խաչենի իշխանության սահմանները Թ.-Ժ. դարերում
(քարտեզի հեղինակ՝ Բ. Հարությունյան)

Նկ. 2. Դադիվանք

նկ. 3. Գանձասարի վանք

նկ. 4. Մորը թևանցուկ զավակները, խաչքարային պատկերաքանդակ, ԺԲ.-ԺԳ. դդ.
(Մարտակերտի շրջան, գյուղ Վաղուհաս)

րի տեղագրությունը: Արցախին նվիրված իր ուսումնասիրությունները գիտնականն ամփոփել է «Արցախ» պատմաաշխարհագրական երկում, որն առաջին անգամ բնագրով հրատարակվել է «Բազմավեպ» հանդեսի 1988-1989 թթ. համարներում: Դրանցում հետազոտողը մանրամասն նկարագրում է Մեծ Հայքի Արցախ նահանգը, նրա գավառները, մանրակրկիտ անդրադառնում բնակավայրերին, բերդերին եւ վանքերին[25]*: Թեեւ վաստակաշատ գիտնականի ուսումնասիրություններում հաճախ բացակայում են այն աղբյուրները, որոնցից նա օգտվել է, այնուհանդերձ Ալիշանի աշխատանքը մնում է անգնահատելի հետազոտություն՝ նվիրված Պատմական Հայաստանի եւ նրա մաս կազմող Արցախի տարբեր հարցերի ուսումնասիրման համար:*

Արցախի պատմաճարտարապետական հուշարձաններն ուսումնասիրողների շարքում իր ուրույն տեղն ունի նաեւ Ռաֆֆին: Վիպասանի «Դավիթ Բեկ», ինչպես նաեւ նախապատրաստվող «Խամսայի մելիքությունները» ստեղծագործությունների համար լրացուցիչ փաստական նյութ հավաքելու նպատակով գրողը ձեռնարկում է երկամյա ուղեւորություն դեպի Արցախ եւ Սյունիք[26]*: Այդ ընթացքում նա շրջում է ԺԷ. դարում Արցախում ձեւավորված հինգ մելիքությունների տարածքներով՝ այցելելով երբեմնի իշխանանիստ ամրոցներ, վանքեր, տոհմային գերեզմանատներ, ուսումնասիրում հին գրչագիր մատյանների հիշատակարանները եւ այլն: Ռաֆֆու հետաքրքրությունները սահմանափակվել են Արցախի պատմության միայն ուշմիջնադարյան՝ մելիքական ժամանակաշրջանով ու այդ ժամանակ եղած պատմաճարտարապետական հուշարձաններով: Այնուհադերձ, դրանց մի մասը արդյունք է ոչ վաղ անցյալում գոյություն ունեցած իշխանների շինարարական գործունեության, որոնց նկարագրությունները պարունակում են հարուստ փաստական նյութ եւ կարեւոր աղբյուր են հանդիսանում նաեւ մերօրյա ուսումնասիրողների համար: Պակաս կարեւոր չեն նաեւ բավական խնամքով արտագրված վիմագրերը, որոնց մի մասը տեղ են գտել Ս. Ջալալյանցի, Մ. Բարխուդարյանցի աշխատություններում՝ «Ռաֆֆուն ուրույն տեղ ապահովելով հայ վիմագրագիտության բնագավառում»* [27]*:*

---

[25] **Ղ. Ալիշան,** Արցախ, թարգմանությունը գրաբարից՝ Գ. Թոսունյանի, Երեւան, 1993:

[26] **Ռաֆֆի,** Երկու ամիս Աղվանից եւ Սյունյաց աշխարհներում, ԵԺ, հ. Թ., Երեւան, 1987, էջ 230-285:

[27] **Ա. Հարությունյան,** Ռաֆֆու հավաքչական աշխատանքների վիմագրական նշանակությունը, «Հայոց լեզու եւ գրականություն», 2011, թ. 5, էջ 49:

Խաչենի իշխանության վանքերի, բերդերի եւ առհասարակ Արցախի հնությունների նկարագրությամբ աչքի է ընկնում նաեւ հայոց պատմության եւ մշակույթի երախտավոր Լեոն (Առաքել Բաբախանյան): Ռաֆֆու պատմա-վավերագրական ուսումնասիրություններից մեծապես ոգեւշնչված՝ շուշեցի գրողը եւս նախաձեռնում է հայրենագիտական ուղեւորություններ Արցախի տարբեր վայրերով: Դրանց ընթացքում հեղինակը շարադրել է տարբեր հուշարձանների պատկերավոր նկարագրությունները, որոնք ուղեկցվում են հայրենի բնաշխարհի, բնակավայրերի, դրանց բնակիչների նիստուկացի, ժողովրդական ծեսերի ու արժեքավոր այլ նկարագրություններով. «Ես ուշադրություն եմ դարձրել հնությունների վրա, որովհետեւ դրանք էին մեր ուղեցույցները, մեր նպատակը»[28]: Խնդրո առարկա թեմայի համար հատկապես կարեւոր են Լեոյի հաղորդումները Ջրաբերդի, Գանձասարի, Հակոբավանքի, Եղիշեի վանքի վերաբերյալ՝ ներկայացված գիտնականին բնորոշ բազմակողմանի վերլուծություններով, սթափ եւ խորաթափանց դատողություններով[29]:

Խաչենի նյութական մշակույթի ուսումնասիրությանը, նրա գահերեց իշխան Հասան-Ջալալի գործունեությանն ու պատմական այլ անցքերին վերաբերող արժեքավոր հետազոտություններ է կատարել ակադեմիկոս Հովսեփ Օրբելին[30]: Նկատենք, որ անվանի գիտնականի հետաքրքրությունը Խաչենի նկատմամբ կապված է պատահական դեպքի հետ: 1908 թ. Կովկասի հնագիտական թանգարանի տնօրենի տեղակալ Ռ. Շմիդտը Թիֆլիսում գտնվող պետերբուրգյան ուսանող Օրբելուն ցույց է տալիս դաշույնի մուգ-կանաչավուն նեֆրիտե դաստակ, որի վրա պահպանվել էր հայատառ փակագիր արձանագրություն: Ջեռնամուխ լինելով վերջինիս հետազոտությանը՝ Օրբելին պարզում է, որ դաշույնը պատկանել է Խաչենի տիրակալ Հասան-Ջալալ իշխանին, ում անունը պահպանվել է դաշույնից մնացած դաստակի վրա՝ «Հասան-Ջալալ իշխան Խաչենոյ»: Դաշույնի ուսումնասիրությանը նվիրված հոդվածը[31] տպագրելուց հետո, Հասան-Ջալալի կերպարով ոգեւորված Օրբելին ձեռնամուխ է լինում գրել նաեւ դաշույնը կրած իշխանի մասին՝ նպատակ ունենալով ներկայացնել Խաչենի տեր Ջալալի կյանքն ու գործունեությունը, կարեւո-

---

[28] **Լեո,** Իմ հիշատակարանը, ԵԺ, հ. 8, Երեւան, 1985, էջ 32:

[29] Անդ, էջ 97-198:

[30] **Ի. Ղարիբյան,** Հովսեփ Օրբելի, Հուշարձան, թ. 9, Երեւան, 2014, էջ 157-158:

[31] **И. Орбели**, Нефритовая кинжальная рукоять с армянской надписью, Избранные труды, Ереван, 1963, с. 135-145.

բագույն իրադարձությունները եւ պատմական այն միջավայրը, որում գործել է մեծ իշխանը: Այդ նպատակով ուսումնասիրելով վիմական ու մատենագիտական բազմաթիվ նյութեր՝ Օրբելին հեղինակում է գիտական մի աշխատություն[32], որը նոր խոսք էր տվյալ ժամանակի հայագիտության մեջ: Այս երկու աշխատությունները հեղինակի կողմից 1909 թ. հունվարին ներկայացվել են Կայսերական ակադեմիայի պատմաբանասիրական բաժանմունքին, ինչի արդյունքում Ն. Մառը երիտասարդ կովկասագետին գործուղում է Խաչեն՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու նպատակով:

Հասան-Ջալալին վերաբերող նյութերը տեղում ուսումնասիրելու, եւ առհասարակ, Խաչենի հարուստ վիմագրական նյութը հետազոտելու նպատակով, 1909 թ. ամռանը Օրբելին ժամանում է Խաչեն: Այստեղ նա մնում է ընդամենը 17 օր, որոնց ընթացքում ընդօրինակում է շուրջ 270 արձանագրություն Խաչենի իշխանության տարբեր հուշարձաններից: Իր հավաքած նյութի հիման վրա գիտնականը շարադրում է «12-13-րդ դարերի Խաչենի խաչքարերի կենցաղային բարձրաքանդակները»՝ հոդվածը[33], դրանով իսկ մատնանշելով, թե հինավուրց այս երկրամասի քարակոթողներն ու վիմագրերը որքան հարուստ ու բազմազան նյութ կարող են տալ պատմաբաններին, հնագետներին, ազգագրագետներին:

Պետք է ընդգծել, որ Հ. Օրբելու գործունեությունն ու գիտական աշխատանքները նոր խոսք էին հայ հնագիտության կազմավորման գործում: Պատմական Խաչենի իշխանության տարածքում նրա կատարած կարճատեւ հետազոտությունների արդյունքում լույս աշխարհ եկան Արցախի միջնադարյան պատմությանն ու մշակույթին նվիրված մի շարք ուսումնասիրություններ, որոնք հետագայում կարեւոր դեր ունեցան խնդրո առարկա տարածաշրջանը հետազոտող մյուս մասնագետների համար:

1911 թ. ամռանը Էջմիածնի սինոդի հրամանով Արցախ է ժամանում Մեսրոպ մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, ում հանձնարարված էր մանրամասն ծանոթանալ Հաղարծին, Թարգմանչաց (Գանձակի գավառ), Զարեքայ եւ Խոթայ (Դադիվանք) նշանավոր վանքերի տնտեսակառավարչական կացությանը, վանքապատկան կալվածների դրությանը: Այդ աշխատանքներին զուգահեռ Տեր-Մովսիսյանը կատարել է նաեւ հիշյալ վանքերի նկարագրությունները՝ դրանցում առկա մի շարք ար-

---

[32] **И. Орбели**, Асан-Джалал, князь Хаченский. Избранные труды, с. 146-174.

[33] **И. Орбели**, Бытовые рельефы на крестных камнях Хачена XII и XIII веков, Избранные труды, с. 196-204.

ձանագրությունների վերծանություններով հանդերձ[34]*: Մեզ զբաղեցնող խնդրի տեսանկյունից արժեքավոր են նաեւ արքեպիսկոպոսի ուղեւորության ընթացքում հանդիպած հուշարձանների հանգամանալից նկարագրությունները, «...որոնք մեծ կարեւորութիւն էին ներկայացնում նաեւ պատմական եւ հնագիտական տեսակէտից»*[35]*: Կատարած հետազոտությունների առավել ամփոփ պատկերը տարիներ անց Մեսրոպ արքեպիսկոպոսը շարադրել է առանձին աշխատության սահմաններում: Դրանում Դադիվանքի նկարագրությունները հեղինակը ներկայացնում է պատմական անցքերի մանրամասներով, հայկական մյուս վանքերի հետ ունեցած ճարտարապետական եւ կառուցողական զուգահեռներով: Աշխատության մեջ հետազոտողն անդրադարձել է նաեւ Դադիվանքի եւ Գանձասարի վանքի ընդհանրություններին, հոգեւոր եւ աշխարհիկ կյանքում ունեցած դերին եւ նշանակությանը՝ եզրակացնելով, որ Դադիվանքում «հոգեւոր շեշտուած կեանքին կից, ժողովրդական մեծ սրբավայր է եղել, համապատասխան ուխտագնացութիւններով»*[36]*: Մեսրոպ արքեպիսկոպոսն առաջինն էր, որ մանրամասն անդրադարձել է նաեւ Դադիվանքի Կաթողիկե եկեղեցում պահպանված որմնանկարների նկարագրությանը, որը սկզբնաղբյուրի դեր է կատարել հետագա ուսումնասիրողների համար*[37]*:*

Հայոց հին ու միջնադարյան նյութական ու հոգեւոր մշակույթի քաջատեղյակ հետազոտողներից էր նաեւ Գարեգին Հովսեփյանը: Տեղին է նկատել, որ գիտնականի հեղինակած պատմահնագիտական ուսումնասիրությունները եւ հայ մշակույթին վերաբերող հետազոտությունները կատարվել են տեսական եւ գործնական գիտելիքների հիման վրա[38]*:*

Ծնունդով արցախցի գիտնականը (Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղից) ջանասիրությամբ հետազոտել է Գանձասարի շրջակայքի Հավապտուկ, Կոշիկ անապատ, Գեռաքարի հուշարձանների եւ այլ վայրերի

---

[34] **Մ. արք. Տէր-Մովսիսեան,** Հայկական արձանագրութիւններ, ԱՀ, Թիֆլիս, 1913, թ. 2, էջ 61-84:

[35] Անդ, էջ 61:

[36] **Մ. մագիստրոս արք. Տէր-Մովսիսեան,** Հայկական երեք Մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղեմ, 1938, էջ 84:

[37] Անդ, էջ 87:

[38] Ի. դարասկզբին Գ. Հովսեփյանը մասնակցում է Ն. Մառի ղեկավարությամբ կազմակերպված Գառնիի պեղումներին, որից հետո ընտրվել է նաեւ Պետերբուրգի կայսերական հնագիտական ընկերության անդամ, (տես **Ս. Հարությունյան,** Գ. Հովսեփյանը որպես բնագետ, ՊԲՀ, 1968, թ. 1, էջ 148):

վիմական արձանագրությունները, մանրակրկիտ ուսումնասիրել հնամյա ձեռագրերը եւ մատենագրական այն աղբյուրները, որոնցում տեղեկություններ են պահպանվել Խաչենի ու նրա գահերեց տերերի վերաբերյալ: Իր կատարած ուսումնասիրությունների արդյունքում Գ. Հովսեփյանը հրատարակում է հայ պատմագիտության մեծարժեք հետազոտություններից մեկը՝ «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» եռահատոր աշխատությունը[39]՝ նվիրված Խաչենի իշխանական տոհմի Խաղբակյան շառավղին: Երկում պատմության անցքերը քննելիս գիտնականը տարբեր առիթներով հաճախ է անդրադառնում նաեւ քննվող տարածաշրջանի հոգեւոր կառույցներին, դրանց վիմական արձանագրություններին, վերլուծում մինչ այդ կատարված հետազոտությունները, տեսակետները:

РЕЗЮМЕ

Княжество Хачена является одним из крупнейших административно-политических единиц в истории армянского народа. Просуществовавшее с некоторыми изменениями с IX до XVI века Хаченское княжество занимало в основном горные районы Арцаха. Историю изучения историко-архитектурных и археологических памятников Арцаха условно можно разделить на три этапа: 1. Досоветский период, 2. Советский период, 3. Постсоветский период или период независимости. Даннаая статья посвящена изучению средневековых памятников на территории Хаченского княжества в досоветский период. Данные исследования были проведены фольклористами и краеведами. Это были первые шаги в области исследований исторических памятников, и большинство дошедших до нас трудов не утратили своего источниковедческого значения до настоящего времени.

[39] **Գ. արք. Հովսեփյան,** Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն Ա., Վաղարշապատ, 1928, մասն Բ., Երուսաղէմ, 1942, մասն Գ., Նիւ Եորք, 1942/3:

SUMMARY

The Princedom of Khachen is one of the largest administrative-political units in the history of the Armenian nation. The princedom existed in certain changing conditions from the 9h to the 16th centuries and occupied mainly the mountainous parts of the piedmont regions of Artsakh. The history of studying historical-architectural and archaeological sites of Artsakh can be conditionally divided into three phases: a) Pre-Soviet period, b) Soviet period, and c) Post-Soviet period or the period of Independence. This article presents the research of medieval sites within the territory of the Princedom of Khachen in the Pre-Soviet period. These studies were conducted by folklorists and local historians, and were the first attempts made in the research of historical sites. The major part of the works that survived up to the present day has not lost their source study importance.